

A.Ts. PETROSYAN

ON THE HISTORY OF DEVELOPMENT OF THE ARMENIAN SCIENTIFIC AND TECHNICAL TERMINOLOGY

In any language, the professional vocabulary can arise together with the development of public relations as a result of professional literature created by the demand of different spheres of science, scientific literature and educational establishments, and all these require the development of lexicography. The creation of scientific and technical terms among the professional words is greatly conditioned by the development of engineering, different branches of industry and production relationships. The issues on the origin of scientific and technical terms and their formation as terminological systems in the Armenian reality are considered. It is shown that since the beginning of the Armenian printing press, the names used for scientific concepts in the created printed dictionaries, particularly in the lexicography of the Mechitarist monks and scientific works have been a basis not only for the Armenian word-stock, but also for the Armenian scientific and technical terminology. Many of the names of the concepts included in the dictionaries are terms belonging to traditional areas of science and engineering: electrical engineering, mechanics and machine science, mining, geology, chemistry.

Keywords: development of science, industry and higher education, lexicography, professional vocabulary, scientific and technical term systems.

ՀՏԴ 82-94

Մ.Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

20-ՐԴ ԴԱՐԻ ԾՈԿԵՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ՀԱՅ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Քննվում է 20-րդ դարի շրջերի՝ հայ հուշագրության վրա ունեցած հոգեբանական և գիտակցական ազդեցության խնդիրը: Կատարված է շրջերի ժամանակագրական խմբավորում:

Առանցքային բառեր. հուշագրություն, հիշողություն, շրկ, հոգեբանություն, գիտակցություն:

Ներածություն: «Շոկ» տերմինը կիրառվում է բազմաթիվ գիտակարգերում՝ սկսած բժշկությունից մինչև տնտեսագիտություն, քաղաքագիտություն և հոգեբանություն: Այն անգլերենից թարգմանվում է որպես *հարված*, *ցնցում* և նկարագրվում որպես պաթոլոգիական պրոցես, որը, ի պատասխան արտակարգ գրգռիչների ազդեցության, սրընթաց զարգանում է և ուղեկցվում կենսական կարևորության համակարգերի գործունեության ծանր խաթարմամբ: Շոկը ոչ հազվադեպ հանգեցնում է կոլապսի (համակործանման) [1]: Շոկի թողած հիշողությունները լինում են շատ վառ, մանրամասնված և անջնջելի. մյուս կողմից՝

դրանք հատվածային են, և բացակայում է այդ հատվածների միջև կապը: Որպես կանոն, շոկ ապրածները ձեռք են բերում *հետվնասվածքային սթրեսային խանգարում*, ինչն իրենով պայմանավորում է նրանց հետագա վարքը:

1915-ին հայությունն ապրեց մի աննախադեպ շոկ, որը կարող էր և հասցնել կոլապսի: Թեև ոչ նույն ուժգնությամբ, բայց հայ ազգային օրգանիզմը 20-րդ դարում անցավ այլ շոկերի միջով ևս: Նախ՝ ազգային շոկերը երբեմն գլխավայր փոխեցին ու փոփոխեցին էթնիկ հոգեբանության կարևորագույն բաղադրիչներ: Երկրորդ՝ դրանք հանգեցրին ազգային ու անհատական գիտակցությունների նոր ուղղվածության և աշխարհընկալման: Այսու՝ լայն առումով մշակույթի, մասնավորապես՝ արվեստների ու գրականության պարագայում տեղի ունեցավ բազմապլան նախապատվությունների ուղղորդիչ առաջնահերթությունների հիմնարար տեղաշարժ: Այդ փոփոխությունը դուրս դրեց տարածության և ժամանակի պատենշները, թեև տարածության մեջ հայությունը 20-րդ դարում գտնվեց քաղաքական տարբեր համակարգերում, իսկ ժամանակի մեջ, չկարողանալով «մարսել» շոկերից մանավանդ մեծագույնը՝ ցեղասպանությունը, ամբողջ 100-ամյակի ընթացքում պտտվեց դրա առանցքի շուրջը՝ հաղթահարելու միտումով: Եվ որքան էլ բանաստեղծը պնդի, թե՛ «Հին աշխարհը չեմ տեսել /Ու ոչ մի բան չեմ հիշում, /Բայց թողել է նա մի թել /Մորս աչքի մշուշում» (Հովհ. Շիրազ), միևնույն է, հենց իր օրինակով ապացուցում է, որ դա ամենևին էլ «մի թել» չէ, այլ ուղղորդիչ՝ թե՛ թեմատիկ առումով, թե՛, առավել ևս, աշխարհագրացման:

Անկախ կրիչի հանգամանքից՝ ազգային գրականության ժանրերից մեկը՝ հուշագրությունը, առավել ամբողջական պատկերացում է տալիս շոկերի թողած հոգեբանական և գիտակցական ազդեցության, շոկերի հետևանքները հաղթահարելու ուղիների որոնումների մասին, քանի որ՝ ա) այն գրական ժանրերից առավել ոչ երևակայականն է, բ) կենսաբանական հատույթում հիշողությունն ամենաուղակիորեն է կապված շոկի հետ:

Մինչեղեռնյան շոկերը: Հայությունը 20-րդ դար մտավ մի կողմից՝ համիդյան կոտորածների բեռան տակ, մյուս կողմից՝ դրանք հաղթահարելու և ավելին ակնկալելու հույսով: Վերջինն արթնացրել էին համաշխարհային տեկտոնիկ տեղաշարժերը: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմն ընկած մեկուկես տասնամյակը եղավ ազգային իղձերի իրականացման համար դեգերումների և հուսավառության, համաեվրոպական մշակութային ընթացքին ինտեգրվելու հաջողակ շրջան, թեև ազգային հողի վրա եղան շփոթեցնող, ազգային իմու-նահամակարգը քննության ենթարկող ցնցումներ: *Մինչեղեռնյան շոկերի կարևոր առանձնահատկությունը հատվածայնությունն էր.* հայ ժողովրդի ոչ բոլոր հատվածներն անմիջականորեն իրենց վրա կրեցին այդ շոկերը:

1903թ.-ին ռուսական կառավարությունը երրորդ անգամ փակեց հայկական դպրոցները՝ այն ուղեկցելով Հայ եկեղեցու գույքի բռնագրավմամբ: Ռուսների մուտքը Հարավային Կովկաս ողջունած Աբովյանի «Վերքով» սկսված և Րաֆֆու «Խենթում» Վարդանի՝ Ռուսաստանի կազմում կուլտուր-ինքնավարության երազով շարունակված արևելահայ նոր գրականության մեծերն արդեն ռուս-ճապոնական պատերազմի օրերին ուրախությամբ սպասում էին Ռուսական կայսրության պարտությանը [2]: Ստ. Զորյանն ինքնակենսագրական վեպում հիշում է տատի բառերը. «Փուլ գա ռուս թագավորի թախտը, խնդրել եմ աստծուց» [3]:

Անսպասելի հարված ու ցնցում՝ շոկ էին ռուսական առաջին հեղափոխության կովկասյան արձագանք հայ-թաթարական 1905-1906թթ. ընդհարումները: Ոչ միայն հետագայի պատմագիտությունը [4], այլև ժամանակի հայ մտավորականներից ոմանք արդեն տեսնում էին, որ դրանք հրահրել է ռուսական կառավարությունը [5]: Ձերբակալվեցին արևելահայ մտավորականներից ամենանշանավորները, նրանց նկատմամբ 1912-ին Սանկտ Պետերբուրգում իրականացվեց խայտառակ դատավարություն [6]: Պետականություն չունեցող ազգի համար իր մտավորականությունն անվիճարկելի սրբություն էր, որի վրա ձեռք էր բարձրացրել ինքնակալությունը: Արևելահայության ոչ միայն քաղաքական ու մտավոր ընտրանու, այլև հասարակ ժողովրդի մեջ ռուսական փրկչական առաքելության հանդեպ անվերապահ հավատն սկսեց երերալ: Թումանյանի մտերիմներից Մարգար Ավետիսյանը վկայում է. «1905 թվի խառն օրերն էին, գնացել էի գյուղ... մի ծերունի, գավազանը գետնին խփելով, ինձ դարձավ թե՛ «Դու էս մտքի հետ ո՞նց ես, ասում եմ՝ ա խալխ, վեր կենանք, էս ռուս դազախներին ու սալդաթներին իրանց չինովնիկներով քշենք Լոռուցը, մեզ համար ջոկ իշխանություն ստեղծենք...» [7]:

Գիտակցական այս փոփոխությունն այն սահմանագծին հասավ, որ հայն առաջին անգամ զենք բարձրացրեց ռուսական իշխանության դեմ. Դրոն 1905թ. մայիսի 11-ին Բաքվում ոչնչացրեց ռուսական նահանգապետ իշխան Նակաշի-ձեին, հայ գյուղացիները զինյալ ընդհարումներ ունեցան ռուս զինվորների հետ [8]: Անշուշտ, սա ռուսական կողմնորոշման ընդամենը *ճաքեր փայլն* էր և ոչ քաղաքական մտահայեցման ամբողջական փոփոխություն, բայց արդեն «Հայի ռուսասիրութիւնը սիրտէն չէ, որ կը ծագի, այլ գլուխէն» (Պ. Միլյուկով) [9]: Բացի *ազգային-քաղաքական կողմնորոշման* վրա թողած հետքից, հայկական դպրոցների փակումը, Հայ եկեղեցու գույքի առգրավումն ու հայ-թաթարական բախումների շոկերն ուղղորդեցին դեպի *սեփական զենքին փարելու գաղափարը*:

Արևմտահայության վիճակի բարվոքման հույսեր առաջացրած երիտթուրքական հեղափոխության հաջորդ տարում՝ 1909-ին իրականացվեց 30000 հա-

յերի կոտորածը, որը հիասթափված հայ ընտրանու քաղաքական *հայացքն ուղղեց դեպի Եվրոպա*: Դրա համար հիմք ծառայեցին նաև Բալկանյան պատերազմներն ու Մեծ տերությունների կողմից Հայկական բարենորոգումները կրկին հրապարակ նետելը:

20-րդ դարի առաջին մեկուկես տասնամյակի՝ մեծ արագություններով միմյանց հաջորդած այս շոկային իրադարձություններն արտացոլվեցին ոչ միայն ժամանակի հայ մամուլում՝ լրագրային ձևերի մեջ ու ժողովրդական երգերում, այլև հետագայում արձանագրվեցին հուշագրություններում (Լեո, Իսահակյան, Շիրվանզադե, Զորյան, Կ. Զարյան, Եսայան, Խատիսյան, Աճառյան, Սիրունի և այլք): Բայց այս պատմաշրջանին վիճակված չէր ուշադրության առանցքում մնալ, քանի որ Առաջին համաշխարհայինի բերած աղետը ստվերեց նախընթաց բոլոր ողբերգությունները: Հուշագրություններում մինչեղեռնյան շրջանի շոկերի արձագանքներն են՝ ա) ռուսական անվիճարկելի քաղաքական կողմնորոշման երերման, բ) սեփական զինված ուժեր ունենալու անհրաժեշտության գիտակցման, գ) երիտթուրքական հեղափոխությունից հիասթափման և եվրոպական խոստումներին փարելու, դ) արևմտահայ մշակութային զարթոնքով շոկերը հաղթահարելու մտայնության արտացոլումները:

20-րդ դարի մեծագույն շոկը՝ Մեծ եղեռն: Բեկումնային ազդեցությամբ ցեղասպանության հետ հայ ժողովրդի գիտակցության մեջ կարող է համեմատվել թերևս միայն *անվանադիր* Հայկի առասպելական պատերազմը: Մեծ եղեռնը ուսումնասիրվում է ցեղասպանագիտության կողմից. հրատարակվել են հազարավոր ուսումնասիրություններ ու վկայություններ [10]:

Արձանագրենք միայն, որ հայ ժողովուրդը, անցնելով ցեղասպանության, հայրենագրվման, ազգային անդամահատման հուսահատեցնող, վախճանաբանական զգացողության բերած աննախադեպ շոկի միջով, օրինաչափորեն ընկավ իրար հաջորդած և մեծ արագություններով պարբերաբար միմյանց փոխարինած ծայրահեղ զգայությունների՝ հուսավառությունների (ռուսական զորքերի առաջխաղացում, հայ կամավորականներ, ինքնապաշտպանություն, Անտանտի երկրների խոստումներ), հուսախաբությունների, հուսահատությունների մեջ: Սա այն եզակի շոկն է, որի մասնակի և երկարատև հաղթահարումը կարող էր կապված լինել՝ ա) ցեղասպանության հետևանքների վերացման (տարածքային ու նյութական փոխհատուցում), բ) գիտակցական աներևակայելի հեղաբեկման հետ: Առաջինը բացառվել է ցայժմ: Երկրորդի, ինչը հոգեբանության մեջ անվանվում է *վերաբեռնում*, լուծման մի տարբերակ էր անցյալից *ժպիտով, երգի-ծանրով* բաժանումը. 1920-ականների խորհրդահայ հուշագրական գեղարվեստը հենց այդ ճանապարհով գնաց (Զարենց, Մահարի, Թոթովենց, Եսայան): Երկ-

րորդի մեկ այլ տարբերակ առաջարկեց Չարենցի «Երկիր Նաիրին»՝ *վիրահատական արքանով* բուժումը: Երկրորդի պարտադիր տարատեսակություններից է «հիշողության խմբագրումը՝ սեփական կարծիքներին համապատասխան» [11]. այս վերջինն ամենատարածվածն է մեզանում:

Հետվնասվածքային սթրեսային խանգարումների բոլոր դրսևորումները ցցուն կերպով երևակված են 20-րդ դարի հայ մտավոր գործունեության մեջ: Այդ համախտանիշի առաջին դրսևորումներից է *մեղավորի փնտրությունը*, որն *ինքնարդարացմամբ*՝ ինքնապահպանական մեխանիզմի կարևոր բաղադրիչներից է [12]: Խորհրդային առաջին տասնամյակներում կատարված ողբերգության մեղավորներ էին հռչակված հայկական «բուրժուական» կուսակցությունները և ֆիդայությունը: Եվ դա միայն քաղաքական պատվերի պատճառով չէր, այլև շուկի հոգեբանական հետևանքների մի ամբողջ փնջի՝ *խուճապի և ընդհանուր փազնապի, հեղափոխման և չհիմնավորված զգուշավորության, գիտակցության կողմից չկանչված հիշողությունների և դրանց խանգարման ու ուշադրության ցրման*: Թեև ազգային իմունահամակարգը փորձում է *խուսափել ծանր հիշողություններից* [13], սակայն ինքնապահպանվում և արձագանքում է մի կողմից՝ *ռեակցիաների պոռթկունությամբ, ագրեսիվությամբ, կատաղության նույններով*, մյուս կողմից՝ *էմոցիաների բթացմամբ, զգայախաբության ապրումներով, դեպրեսիայով*, մինչև իսկ՝ *վերապրողի մեղավորությամբ ու ինքնասպանության մտքերով*: Ամենաակնառու օրինակը Կոմիտաս վարդապետի հետեղեռնյան տարիներն էին, ավելին՝ օտարների հուշագրությունները ևս վկայում են ոչ միայն պոստտրավմատիկ ընկճախտի, այլև ինքնակամ մեկուսացման, սեփական եսից փախուստի մասին [14]: Հուշին ապավինելը նաև *փախուստի ձև* է սթրեսից (ներկայից դեպի անցյալը), որը ցանկացած դեպքում ապահովության, պաշտպանվածության զգացողություն է տալիս, թեև «երբ հին հիշողության ասպեկտներն ակտիվանում են նոր փորձ ձեռք բերելիս, ապա մեծ է հավանականությունը, որ նոր գիտելիքը դեֆորմացիայի կենթարկվի» [15]: Սրանով այսօր կարող են բացատրվել բազում կենսական իրողություններ:

Այս թեման օբյեկտիվ մոտեցմամբ գրեթե չշոշափվեց խորհրդահայ գրականության մեջ, իսկ լույս տեսած հուշագրություններում հնարավորինս շրջանցվեց: Սփյուռքահայ գրականության մեջ մոտեցումը թեև առավել անկաշկանդ, բայց օրինաչափորեն դարձյալ ծայրահեղացված էր. մեղավոր էին բոլորը՝ Թուրքիան, Եվրոպան, Ռուսաստանը, հայ այս կամ այն քաղաքական հոսանքն ու գործիչը, բայց ոչ երբեք հայ քաղաքական միտքը: Անշուշտ, սա չի նշանակում, թե գիտակցողներ չեղան. օրինակ՝ արդեն 1930-ականներին Թոթովենցն արձանագրում է. «Մեր ժողովրդի զավակները պատմությունը չէին ըմբռնում, գործում էին բալ-

կանյան ժողովուրդների ազատագրական պայքարի օրինակով, ինչով որ կործանման տարան մեր ժողովրդին: Մեր ղեկավարներից ոչ ոք չլսեց Էնգելսի մարգարեական խոսքերը. «Հայաստանի ազատագրումը թուրքերից և ռուսներից հնարավոր է միայն ռուսական ինքնակալության տապալումից հետո» [16]: Հնարավոր օբյեկտիվության տոկոսի փոքր լինելն օրինաչափ հետևանքն էր շոկի թողած պաթոլոգիական ավերման, ինչը չլինել չէր կարող: Սփյուռքյան իրականությունն էլ իր հերթին առավել իրատեսական հարցադրումների կարիք ուներ, որն առաջինն արեց Շահան Շահնուրն իր «Նահանջն առանց երգի» վեպով: Սփյուռքահայությունն ինքն իրեն սկսեց ապրեցնել բացառապես անցյալով, մինչդեռ ազգային գոյապահպանության տեսանկյունից խնդիրների առաջադրում և լուծումներ էին անհրաժեշտ [17]: Մեծ եղեռնի մասին հուշագրություններում առանձնակի սրությամբ դրսևորվեց տարադավան հայության վաղեմի խնդիրը (Օտյան, Թոթովենց, Շիրակյան, Բ. Թոփալյան, Ստ. Կուրտիկյան, Գ. Ստեփանյան և այլք)՝ սկսած ինքնապաշտպանության, հայապահպանության, սահբեկչության հանդեպ ունեցած վերաբերմունքից, մինչև քրդացած արյունակից եղբայրների հոծ զանգվածների առկայություն [18], որն այսօր ամենաուղղակիորեն առնչվում է ազգային անվտանգությանը:

Մեծ եղեռնի շոկի վերապրումը նոր սրությամբ դրսևորվեց 1965-ին Խորհրդային Հայաստանում, երբ խորհրդային կայսրությունը փոքր-ինչ թուլացրել էր բռնապետական պնդողակները: Դա արտահայտվեց ոչ միայն ժողովրդական հուզումներով, այլև գրականության մեջ թեմայի վերարձարժմամբ: Պատահական չէ, որ ցեղասպանության շոկի հաղթահարման այդ փորձի ընթացքում հրապարակ բերվեց Ղարաբաղի խնդիրը: Մեկ տասնամյակ անց՝ 1975-ին, շոկի հաղթահարման իր ճանապարհն առաջարկեց սփյուռքի երիտասարդության մի շերտ, որ ԱՍԱԼԱ-ի ծննդով կենդանի գրգիռներ հաղորդեց անշեղորեն դեպի ուժացում գնացող սփյուռքյան մարմնին:

Ավելին՝ Մեծ եղեռնի շոկն իր դերակատարումն ունեցավ ԽՍՀՄ փլուզման տարիներին, երբ Ղարաբաղյան շարժումը սկսվեց պահանջատիրական տրամաբանության ծիրում: Թվում էր, թե անկախ պետականության վերականգնումը շոկի հաղթահարման նոր մոտեցում կառաջադրի, սակայն պետականության արշալույսին բախվեցին երկու գաղափարներ՝ *պահանջափրկականն ու երրորդ ուժի բացառումը*: Մեծ եղեռնի շոկն իր հետքերը հստակ ցույց տվեց Անկախության հռչակագրում, Սահմանադրության և ՀՀ արտաքին քաղաքականության մեջ: Եվ դա միանգամայն օրինաչափ է: Օրինաչափ է նաև, որ 21-րդ դարում ևս չհաղթահարված այդ շոկի աշխարհընկալումային հետևանքների առանցքի շուրջն է պտտվում հայ քաղաքական, հասարակական, գեղարվեստական միտքը:

Հետեղեռնյան շոկերը: Ռուսական կայսրության փլուզման և 1918-ի հերոսամարտերի շնորհիվ ծնունդ առած Առաջին հանրապետությունը 1920-ին հայտնվում է բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի արանքում (ձևակերպումը՝ Ս. Վրացյանի) [19]: Առաջին հանրապետության ծագումն անսպասելի էր. հույզերի տարափ, որ խորհրդահայ գրականության մեջ, նաև հուշագրություններում ներկայացվեց բացառապես բացասաբար, լավագույն դեպքում՝ որպես երկրորդական իրադարձություն: Սփյուռքահայ հուշագրության մեջ այն հիմնականում ներկայացվեց որպես հերոսական մաքառում:

1920-ին սկսված թուրքական հարձակումները հանգեցրին Հայաստանի պետականության ոչնչացմանը և տարածքների բաժանմանը: Հուսավառության և հուսահատության այս արագընթաց հերթազայությունը, բոլշևիկների կողմից Երևանի բանտում հայ մտավորականության ու սպայության կացնահարումը, փետրվարյան ապստամբությունը, Լեռնահայաստանում Նժդեհի սխրանքով հանդերձ՝ Նախիջևանի և Արցախի հանձնումը Խորհրդային Ադրբեջանին, ծայրահեղ շոկային էին, որոնց օրինաչափորեն պետք է հաջորդեր ազգային կոլապսը: Խորհրդային Հայաստանի գոյության փաստը դարձավ կոլապսի դեմ միակ կռվանը: Խորհրդահայ պաշտոնական պատմագիտության, ինչպես նաև գրականության մեջ նախակոլապսային այս վիճակները կա՛մ շրջանցվեցին, կա՛մ ներկայացվեցին բոլշևիկյան «փրկարարության» դիրքերից, մինչդեռ սփյուռքյան հուշագրությունները, որոնց հեղինակները հիմնականում Առաջին հանրապետության հայրերն էին, պատմության ատյանի առջև վկայության, երբեմն՝ ինքնաարացման բնույթ ունեին:

Մինչև վերջ ուշքի չեկած Մեծ եղեռնի, պետականության կորստի, Կարսի մարզի, Արցախի և Նախիջևանի անդամահատման շոկերից՝ ընդամենը մեկուկես տասնամյակ անց կովկասահայությունը կանգնեց նոր եղեռնի առջև. Գնդակահարություններն ու աքսորը չշրջանցեցին հայաբնակ ոչ մի բնակավայր: Այս շոկը բերեց մոլեգին դիմակայության, որ, մասը լինելով խորհրդային ընդհանուր մթնոլորտի, վերոնշյալ ազգային-հոգեբանական պատճառներով կրեց առավել անհանդուրժող, ինքնառչնչացնող և ծայրահեղ բնույթ: Դրա հետևանքը ցայսօր մինչև վերջ չհաղթահարված կասկածամտությունն ու անվստահությունն են:

1941-45թթ. պատերազմում խորհրդահայությունը տվեց 500 հազար մասնակից և 200 հազար զոհ, այն դեպքում, երբ ամբողջ ԽՍՀՄ-ում հայերի թիվը չէր հատում 2 միլիոնը: Այսինքն՝ ոչնչացվեց խորհրդահայության 10 տոկոսը: Այս ցնցումից ուշքի չեկած՝ խորհրդային կայսրությունը վերսկսեց հայերի աքսորը Կովկասից, որը շարունակվեց ընդհուպ մինչև Ստալինի մահը: Միայն այդ տարիներին գնդակահարվեց և աքսորվեց մոտ 100 հազար հայ: «Եվ երեք հան-

րապետություններից արտաքսեցին միայն հայերին» [20],- գրում է Ստ. Զորյանը:

Այս շուկերի դեմ միակ հույսը Խորհրդային Հայաստանում հայության թեկուզև անտանելի, բայց սեփական հողի վրա գտնվելու պայմանն էր. երկրորդ այդպիսի պետականատիպ միավոր չկար: Դեռևս Առաջին հանրապետության սկսած ներգաղթի դրական գործընթացը, իհարկե, որպես Խորհրդային գաղափարախոսական պատերազմի սպասարկու, որոշ ընդհատումներով շարունակվեց [21]: Չնայած Խորհրդային այլ հանրապետությունների հետ համեմատած խտրական վերաբերմունքին՝ Խորհրդային Հայաստանը զարգացավ՝ հիմք դառնալով Երրորդ հանրապետության դժվարությունները դիմակայելու համար:

Ստալինի մահից հետո հայ ժողովուրդը մինչև 1988թ. այլ սթրեսային անընդմեջ լարումներ էլի ունեցավ, ինչպես, օրինակ, քաղաքական և տնտեսական անազատությունները, տեղեկատվական շրջափակումը և տոտալ վերահսկումը, Սփյուռքահայության և հայաստանահայության շփումների գրեթե զրոյական աստիճանը, ինչպես նաև Մեծ եղեռնի 50-ամյակի ժողովրդական հուզումները, ազատախոհության համար քաղաքական բանտարկումները, Բեյրութի հայկական թաղամասերի օրհասական ինքնապաշտպանությունը, ԱՍԱԼԱ-ի և Ցեղասպանության մարտիկների՝ ահաբեկչության միջոցով Հայկական հարցի վերաբարձարծումը, մանավանդ արևմտյան սփյուռքում և ԽՍՀՄ այլ հանրապետություններում հայության թավալվոր ուժացումը, ռուսական դպրոցների ծավալուն աճը՝ ի հաշիվ հայկականի: Սրանց անդրադարձները Խորհրդահայ հուշագրության մեջ կրում էին շեշտված գաղափարախոսական և խրամատավորված բնույթ, իսկ սփյուռքյան հուշագրություններում մակարդակը հազվադեպ շեղվեց կենցաղագրականից և կուսակցականացվածությունից: Միմյանց հաջորդած այս շուկերի լակոնիկ մարմնավորումը Մ. Գալշոյանի Զորի Միրոյի երեք նույնանուն որդիներն էին՝ **Հարություն**. առաջինին թուրքերը մորթեցին, երկրորդ Հարությունը գնաց նացիզմի դեմ կռվելու և զոհվեց, երրորդ Հարությունի լեզուն (լայն իմաստով) արդեն խորթ էր Միրոյին:

20-րդ դարի վերջին երկու շուկերը պատուհասեցին գրեթե միաժամանակ, սակայն միարժեքորեն բացասական վեկտոր չէ, որ ունեցան: Առաջինը 1988թ. փետրվարին համաժողովրդական հուզումներն էին՝ Արցախը ՀԽՍՀ-ին միավորելու պահանջով, որը շատ արագ վերածվեց ազգամիջյան արյունալի պատերազմի՝ գագաթնակետին հասնելով 1992-94թթ.-ին: Քանի որ պատերազմը սառեցվեց հայկական կողմի տարածքային զգալի առավելությամբ, ուստի այդ շուկը, որ իր հետ բերեց ավելի քան 6000 զոհ, մոտ կես միլիոն գաղթականություն, Արցախի դաշտային մասի և Ուտիքի հայաթափում, Հայաստանի բնակչության դաժան գոյապայքար և մոտ մեկ միլիոնի արտագաղթ, հաշվեկշռային

առումով դրական ազդեց պարտվածի հոգեբանությունը փոխելու տեսանկյունից: Այդ ժամանակների մասին գրվեցին և գրվում են հուշագրություններ, ռազմական երգեր և այլն, որոնք, անկախ իրենց կատարման մակարդակից, միանգամայն այլ հոգեբանական հատույթում են:

Արցախյանին զուգահեռ պայթած մյուս շոկը 1988թ. Սպիտակի երկրաշարժն էր, որը, ըստ խորհրդային պաշտոնական տվյալների, խլեց 25 հազար հայի կյանք: Սակայն այս շոկը, իր ժողովրդագրական և մարդկայնորեն ողբերգական կողմից զատ, ունեցավ նաև դրական հետևանք, որն արտահայտվեց հայության էներգիայի միատեղմամբ: Դա հնարավոր եղավ գորբաչովյան ազատությունների շնորհիվ: Այս շոկը ևս իր անդրադարձները գտավ հայ գրականության մեջ, այդ թվում՝ հուշագրության, սակայն ավելի նվազ չափով, քանի որ օբյեկտիվորեն ստվերվեց առավել երկարատև, ազգային լինելության խնդիր լուծող արցախյան պատերազմի շոկով:

Եզրակացություն: Հայ գեղարվեստական մտքի, այդ թվում՝ հուշագրությունների թեմատիկան, հոգեբանական կողմնորոշումը, աշխարհայեցումն ու աշխարհագրագողությունը 20-րդ դարում հիմնականում որոշվեցին նրա ապրած շոկերով, որոնք իրենց հերթին պարբերացվեցին մեծագույն շոկի՝ Մեծ եղեռնի առանցքի շուրջ: Սակայն դարն ունեցավ նաև շոկերի հակառակ երեսը՝ հուսավառության շրջաններ: Դրանցից առաջինը Առաջին աշխարհամարտի սկզբում տաճած հույսերն էին՝ վերջապես ազգային օջախ ունենալու հանդեպ, երկրորդը 1918թ.-ին Հայաստանի Հանրապետության ծնունդն էր, երրորդը՝ Խորհրդային Հայաստանի գոյության շնորհիվ փոքրիկ հայրենակտորին կառչելու և այնտեղ զարգանալու հնարավորությունը և չորրորդը՝ 1991թ.-ին ներկա անկախ պետականության ծնունդը, որն արդեն քառորդ դար կարողացավ գոյատևել՝ երբեմն կենաց-մահու վիճակներ հաղթահարելով: Այս վերջինն արդեն սկսել է հուշագրությունների թեմա դառնալ, որը հոգեբանական խորքային առումով հակապատկերն է շոկերով պայմանավորված 20-րդ դարի հուշագրությունների:

Շոկերից յուրաքանչյուրն ունի իրեն հատուկ թեմաների բազմություն. Օրինակ՝ Մեծ եղեռնի շոկ – *բանտեր և բանտարկություն, ընդհատակ, կոտորած, գաղթ, ինքնապաշտպանություն, ահաբեկչություն, սիյուռքացում-հարմարում, մարտիչներ և գործակալներ, կովկասահայերի և արևմտահայերի մոտեցումների տարբերություններ* և այլն: Շոկերից մի քանիսը, հատկապես Երկրորդ համաշխարհայինը, լայնորեն խրախուսվեցին որպես հուշագրության թեմա, ավելին՝ շատ օտարալեզու հուշագրություններ թարգմանվեցին: 20-րդ դարավերջից ցայսօր թարգմանվում են ցեղասպանության մասին հուշագրություններ: Ժողովրդի պատմության՝ չհաղթահարված շոկերով էջը թերթելն անհնար է, մանավանդ երբ այդ

շուկերից որոշների (ցեղասպանություն, Կարսի մարզի հանձնում Թուրքիային, Արցախի և Նախիջանի հանձնում Ադրբեջանին) հետևանքները դեռևս գործոններ են ներկա կյանքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Адо А.Д.** Патологическая физиология: Учебник для медицинских вузов.- М.: Триада-Х, 2000, С. 54-55: XXXIV+574 ст.
2. **Լեո**, Երկերի ժողովածու 10 հատորով, հատոր 8-րդ, Եր., Սովետական գրող, 1985, էջ 427. 568 էջ:
3. **Ջորյան Ստ.**, Մի կյանքի պատմություն, Եր., Արևիկ, 1988, էջ 126. 432 էջ:
4. Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Եր., ԳԱ, 1981, էջ 390. 1052 էջ:
5. **Շիրվանզադե**, Կյանքի բովից. հուշեր, Եր., Հայաստան, 1982, էջ 235, 536 էջ:
6. Թումանյանի գավակները: Աշխեն. Հուշեր և ընտանեկան պատմություններ, Եր., Մուղնի, Հովհ. Թումանյանի թանգարան, 2011, էջ 70. 408 էջ:
7. Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Եր., Էդիթ Պրինտ, 2009, էջ 179, 1004 էջ:
8. **Խանզադյան Ս.**, Հայրենապատում, Գիրք Ա, Հայաստան, 1980, էջ 144. 480 էջ:
9. **Խատիսեան Ա.**, Քաղաքապետի մը յիշատակները, Պէյրուֆ, Համազգայինի տպ., 1991, էջ 87. 408 էջ:
10. <http://www.houshamadyan.org/en/home.html> :
11. <http://www.tert.am/am/news/2014/02/05/hishoxutyay-popoxum/> :
12. **Ֆրոյդ Ջ.**, Հոգեվերլուծության ներածություն, Եր., Զանգակ-97, 2002, էջ 268-269. 472 էջ:
13. Հոգեբանություն (Ա.Գ.Կովալյովի, Ա.Ա.Ստեպանովի, Ա.Ն.Շաբալինի խմբագրությամբ), Եր., ԵՊՀ, 1970, էջ 231. 596 էջ:
14. **Բրունո Է.**, Ապրած օրերը Ուրֆայում, Եր., ԳԱ, 1990, էջ 58-59. 64 էջ:
15. <http://news.am/arm/news/329519.html> :
16. **Գասպարյան Դ.**, Փակ դռների գաղտնիքը. Չարենցը, Բակունցը եւ մյուսները, Եր., Ապոլոն, 1994, (Վահան Թոթովենց. Մեղադրական գործ 19144, ֆոնդ 2526, 267 էջ), էջ 80. 727 էջ:
17. **Մարության Հ.**, Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում, Եր., Նորավանք ԳԿՀ, էջ 43. 89 էջ:
18. **Թափառական**, Դէպի կախաղան, Պոսթրն, «Հայրենիք» տպ., 1932թ., 877 էջ:
19. **Վրացյան Ա.**, Հայաստանի Հանրապետություն, Եր., Հայաստան, 1993, էջ 471. 704 էջ:
20. **Ջորյան Ստ.**, Մահամնա, Եր., Մշակույթ, 2013, էջ 247. 336 էջ:
21. **Մելիքսեթյան Հ.**, Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.). Եր., ԵՊՀ, 1985, էջ 300, աղյուսակ. 476 էջ:

Մ.Գ. ԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ОТРАЖЕНИЕ ШОКОВ XX ВЕКА В АРМЯНСКОЙ МЕМУАРИСТИКЕ

Исследуется проблема психологического и сознательного влияния шоков XX века на армянскую мемуаристику. Проведено хронологическое редактирование шоков.

Ключевые слова: мемуаристика, память, шок, психология, сознание.

M.H. HAYRAPETYAN

THE IMPACTS OF THE 20th CENTURY SHOCKS ON ARMENIAN MEMOIR LITERATURE

The issue on psychologic and conscious impacts of the shocks of the 20th century on Armenian memoir literature is investigated. The shocks were chronologically edited.

Keywords: memoir literature, memory, shock, psychology, consciousness.

ՀՏԴ 004:811.19

Հ.Լ. ԶՈՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Դիտարկվում են տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) բնագավառի հասկացությունների անգլերեն անվանումների կիրառությունը հայերեն բանավոր և գրավոր խոսքում: Ցույց են տրվում դրանց հայերեն տարբերակների համարժեքությունը, ստեղծման եղանակները, թարգմանության անհրաժեշտությունը, տարածման ուղիները:

Առանցքային բառեր. փոխառություն, հասկացություն, թարգմանություն, համարժեքություն, ուսուցում:

Քոմպիյութերային և ինտերնետային տեխնոլոգիաների արագ զարգացումը և տարածումը, դրանց կիրառությունը հնարավորություն է տալիս իրագործել մի շարք արտադրական և ստեղծագործական խնդիրներ: Այդ տեխնոլոգիաները արագ ներթափանցել են սովորական մարդու կենցաղը և դարձել նրա առօրյայի անբաժանելի մասը: Այսօր հնարավոր չէ պատկերացնել մեր կյանքն առանց բջջային հեռախոսի, համակարգչի և այլ միջոցների:

ՏՏ ոլորտը ծագել և ձևավորվել է ԱՄՆ-ում, ուստի ոլորտի հասկացությունները նշանակող տերմինները անգլերեն են: Տեղեկատվական տեխնոլոգիաների հետ բառապաշարի մեջ թափանցում են դրանք արտացոլող բառերը: Աշխարհի շատ լեզուներ փոխ են առել ոլորտի տերմինները անգլերենով: Հայերենը նույն-